Հաստատում եմ

Տնօրեն՝ _____ Գ. Մեհրաբյան

04 03 2020թ.

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քոլեջի նպատակն է ապահովել որակյալ կրթական միջավայր, որտեղ սովորողը կարողանա բացահայտել իր կրթական կարիքները, ստանա մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

Քոլեջում սովորողների կարիքների վերհանման քաղաքականությունը ուղղված է սովորողների կրթական կարիքների ուսումնասիրմանը, բացահայտմանը և ըստ կայացրած որոշումների կրթական գործունեության իրականացմանը:

Քոլեջի նպատակն է՝

- ցուցաբերել լրացուցիչ աջակցություն սովորողին ուսումառության ամբողջ ընթացքում,
- աջակցել սովորողներին ուսումնական գործընթացներում,
- ուսումնասիրել և վերլուծել սովորողների վերհանած կարիքները՝ կրթական գործունեության բարելավման և կրթական համակարգի զարգացման համար,

սպառողի կարիքներին և պահանջներին համապատասխան,

- սովորողների կողմից վերհանած կարիքին տալ համապատասխան լուծում:

Քոլեջի սովորողները իրավունք ունեն արտահայտել իրենց կարիքները քոլեջի միջավայրի և գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ՝

- ***Ուսումնական գործընթաց*** (դասավանդման որակ, ուսումնառության միջավայր և միջոցների ապահովվածություն, լրացուցիչ խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն):
- ***Այլ ծառայություններ և գործընթացներ*** (կարիերայի զարգացում, սոցիալական աջակցվություն, ուսման շարունակություն և այլն):

Քոլեջում սովորողների աջակցության ուղղություններն են՝

- մասնագիտական աջակցություն,
- աջակցություն ուսումնառության ընթացքում,
- սոցիալական աջակցություն,
- աջակցություն վարչական անձնակազմի կողմից,
- ուսումնառության ռեսուրսների ապահովում,
- կարիերայի զարգացմանը ուղղված աջակցություն:

Ակադեմիական և լրացուցիչ աջակցություն

Քոլեջում սովորողների կարիքների բացահայտման օղակ են հանդիսանում կուրսղեկները, ուսումնական մասը, ղեկավար անձնակազմը և ուսանողական խորհուրդը:

Ուսումնական գործընթացի հետ կապված կարիքները սովորողը կարող է վերհանել կուրսղեկի և ուսումնական մասի միջոցով:

Ընդհանուր իրավունքների հետ կապված կարիքները սովորողը կարող է վերհանել *ուսանողական խորհրդի միջոցով:*

Կարիերայի զարգացման և ուսման շարունակման հետ կապված կարիքները սովորողները կարող է վեր հանել մասնագիտական առարկայական ցիկլերում, կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնում: